

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին կանոնադրությամբ (այսուհետև՝ Կանոնադրություն) և այլ իրավական ակտերով՝ կազմվել է Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետև՝ Հաշվետվություն): Հաշվետվությունն արտացոլում է հաշվետու տարում կատարված աշխատանքները, իրավիճակի զարգացումն ու փաստացի տվյալների համեմատականը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ:

Տեսչական մարմինը գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և Կանոնադրության հիման վրա: **Տեսչական մարմնի նպատակն է՝** օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության, ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը: **Տեսչական մարմնի խնդիրներն են՝** վերահսկողության ենթակա հինգ ոլորտներում ՀՀ օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն ու կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Կանոնադրական գործառույթների շրջանակներում 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումներից, վերահսկողական գործառույթներից և իրազեկման աշխատանքներից բացի, Տեսչական մարմինն իրականացրել է նաև չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ ստուգայցեր: Տեսչական մարմինը նաև մշտապես քայլեր է ձեռնարկել բարելավելու իր կանոնադրական գործառույթներից բխող իրավական ակտերի, տեխնիկական և կադրային հազվեցվածության, միջազգային համագործակցության, թվային նոր գործիքների ներդրման և կադրերի վերապատրաստման ուղղությամբ:

I. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☎ (374-10) 65-05-53, Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

Գործունեության կատարողականի գնահատումը ներկայացված է հավելված 1-ում:

II. 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի կատարման ընթացքը ներկայացված է հավելված 2-ում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմինը Կանոնադրության 10-րդ կետի համաձայն, օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերահսկողության ենթակա՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը վերահսկողության ենթակա ոլորտներում:

Տեսչական մարմնի գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև վերահսկողական ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացնելու նպատակով հիմք են հանդիսացել Տեսչական մարմնի կողմից 2020-2022 թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքները՝ առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ և խախտումների պարբերականությամբ պայմանավորված:

Տեսչական մարմինը, ըստ վերահսկողության ենթակա հինգ ոլորտների, վարել է տվյալների բազա՝ ըստ տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով՝ վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ: Տվյալների բազայի ձևավորման համար հավաքագրվել է համապատասխան տեղեկատվություն՝ ինչպես կանոնադրական գործառնությունների իրականացման արդյունքում Տեսչական մարմնում առկա

տեղեկատվությունից, այնպես էլ Տեսչական մարմնի տեղեկատվական բազայում չընդգրկված և ստուգում իրականացնող պետական այլ մարմինների տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկատվությունից: Բազայում առկա տեղեկատվության հիման վրա ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշման պահանջների համաձայն, ըստ տնտեսավարողների և ըստ ոլորտների հաշվարկվել են տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը և դասակարգվել ըստ բարձր, միջին և ցածր ռիսկայնության խմբերի: Այսպիսով, թե 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածի և թե նախորդ 2020-2021 թվականների համար ռիսկի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է համապատասխանաբար յուրաքանչյուր տարվա բազայում առկա տեղեկատվության և ռիսկայնության չափանիշների ու չափորոշիչների կիրառմամբ:

Վերը նշված բազայի հիման վրա կազմվել և Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 22-ի 10-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» Ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2022 թվականի ընթացքում նախատեսվել էր իրականացնել 700 թեմատիկ ստուգում՝ 647 տնտեսավարող սուբյեկտների մոտ (ըստ հինգ ոլորտների), որոնցից՝ 547 բարձր և 153 միջին ռիսկայնությամբ:

Տեսչական մարմնի կողմից 2022 թվականի հաշվետու տարում որդեգրած քաղաքականությունը միտված է եղել վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտներում ռիսկերի նվազեցմանը՝ վերահսկողական աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու և թիրախների ընտրության, ինչպես նաև օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման վերահսկողությանը:

Արդյունքում, 2022 թվականին 899 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել և ավարտվել է թեմատիկ ստուգում, այդ թվում 309 վերստուգում (շուրջ 34%): Արդյունքում խախտումները վերացնելու նպատակով տրվել է 539 (այդ թվում վերստուգման՝ 58) հանձնարարական (կարգադրագիր):

«Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» Ծրագրի շրջանակներում 601 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել է թեմատիկ ստուգում, որից 37 ստուգում՝ ընթացքի մեջ է:

Ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ ոլորտի, ստուգման տեսակի, քանակի և հիմքի) առավել մանրամասն ներկայացված է Հաշվետվության VI գլխում:

IV. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում ըստ վերահսկողության ենթակա ոլորտների իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ: Թեժ գծով ստացվող զանգերին տրվել են պատասխաններ և պարզաբանումներ: Խորհրդատվական գործունեության ժամանակ լուսաբանվել են ոլորտներին վերաբերվող ընդհանուր բնույթի հարցեր, ինչպես նաև ըստ անհրաժեշտության հարցերին տրվել են հստակ պատասխան-պարզաբանում՝ իրականացնելով 6487 (2021թ.՝ 5662, 2020թ.՝ 5616) խորհրդատվական աշխատանքներ, որից 715՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություններ և գրություններ, 5635 (2021թ.՝ 4411, 2020թ.՝ 2500)՝ «Թեժ գիծ» ծառայությամբ ստացված հարցերի պատասխաններ և պարզաբանումներ, իսկ 137՝ Ֆեյսբուքյան էջով ստացված հարց-բողոք:

Տեսչական մարմնի կողմից տրված խորհրդատվություն

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են հետևյալ խորհրդատվական աշխատանքները.

- ստաֆիլակոկարության վերաբերյալ ուղարկվել են գրություններ՝ անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու վերաբերյալ,
- խմելու ջրի նմուշներում արձանագրված շեղումների վերաբերյալ համայնքների ղեկավարներին ուղարկվել է տեղեկատվություն,
- ուղարկվել են գրություններ՝ կազմակերպ հաստատությունների, առողջության պահպանման առաջնային օղակի տնօրեններին՝ վարակիչ հիվանդությունների դեպքերի արձանագրման հետ կապված վարակի տարածման կանխարգելման նպատակով,


- տնտեսավարող սուբյեկտների աշխատողների պարբերական բժշկական զննությունը կազմակերպելու համար ղեկավարներին ուղարկվել են գրություններ,
- Տեսչական մարմնի վերահսկողության ենթակա ոլորտների վերաբերյալ կազմակերպվել են սեմինարներ,
- Կանոնադրական գործառույթների շրջանակներում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են սեմինար-քննարկումների,
- քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարզաբանումներ և պատասխաններ,
- Տեսչական մարմնի նախաձեռնությամբ անցկացվել են լայնածավալ միջոցառումներ՝ աշխատողների անվտանգության և առողջության հետ կապված, որին մասնակցել են Երևանի և մարզերի շուրջ 1500 աշխատողներ և արհեստակցական միության ներկայացուցիչներ,
- վերահսկողական գործառույթների (ստուգում, վարույթ) վերաբերյալ հաճախ տրվող հարցերի շրջանակներում իրականացվել են խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ, էլեկտրոնային տարբերակով տրվել է տեղեկատվություն՝ իրազեկելով փոփոխված և նոր ստուգաթերթերի մասին, ինչպես նաև ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ տրվել են հստակ պատասխաններ,
- Իրականացված կանխարգելիչ գործողությունների արդյունքում քաղաքացիները և տնտեսավարող սուբյեկտները իրազեկվել են կարանտինի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելմանն ուղղված իրավական ակտերի պահանջների, նրանցում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

«Թեժ գիծ» ծառայություն


«Թեժ գծով» ստացված **5635** զանգերի բաշխումն ըստ ոլորտների և բնույթի՝

- Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 3242 (57,5%),
- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 274 (4,8%),
- Առողջապահության նախարարի 17-Ն հրամանի վերաբերյալ՝ 309 (5,48%),
- դեղերի շրջանառության ոլորտում՝ 110 (2%),

- բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 127 (2,3%),
- տեղեկատվություն՝ 897 (15,9%),
- Տեսչական մարմնի գործառույթից դուրս՝ 675 (12%),
- առաջարկ՝ 1 (0,02%),



«Թեժ գծով» ստացված զանգեր 2020-2022թթ



Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցեր

Տնտեսավարող սուբյեկտների կողմից տրված հարցերի գերակշիռ մասը վերաբերել է աշխատանքային իրավունքի ոլորտում ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմանը, մասնավորապես.

- աշխատանքային օրենսդրության կիրարկմանը,
- աշխատանքի պայմանների և աշխատողների իրավունքների պահպանմանը,
- առողջությանը պատճառված վնասի փոխհատուցմանը,
- բժշկական զննությունների անցկացման ընթացակարգերին,
- աշխատանքից ազատվելու դեպքում վերջնահաշվարկի կատարման կարգին,
- աշխատանքից ազատման համար սահմանված ընթացակարգերին,
- արտաժամյա աշխատանքի համար սահմանված հավելումների հաշվարկմանը,

- հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվողների աշխատանքային իրավունքներին,
- Covid-19 դեմ չպատվաստված և առանց թեստավորման աշխատանքի ներկայացող անձանց աշխատանքի չթույլատրելուն և նշված հիմքով աշխատանքից ազատման իրավաչափությանը:

Իրազեկման միջոցառումների իրականացում

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են կազմակերպվել մամուլի հաղորդագրությունների տեսքով, «Թեժ գիծ» ծառայությունով, հարցազրույցների ու ասուլիսների կազմակերպմամբ, Տեսչական մարմնի ֆեյսբուքյան պաշտոնական էջով ստացված հարցադրումներին ի պատասխան, ինչպես մարզային, այնպես էլ մայրաքաղաքում կազմակերպված ֆոկուս խմբերի հետ իրազեկման սեմինարների միջոցով:

Հրապարակումները հիմնականում եղել են COVID-19 համավարակով պայմանավորված իրավիճակի, COVID-անվտանգության նորմերի վերահսկման նպատակով ՀՀ ողջ տարածքում Տեսչական մարմնի ստուգայցերի վերաբերյալ: Վերջինների մասին պարբերաբար տեսանյութեր են տեղադրվել, իսկ յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա վերջում ամփոփ նյութ է հրապարակվել՝ Տեսչական մարմնի մասնագետների կողմից նախորդ շաբաթվա ընթացքում իրականացրած ստուգայցերի մասին:

Հանրությանը տեղեկացվել է կեղծ ՊՇՌ թեսթեր հայտնաբերելու մասին, իրազեկվել է ՀՀ ԱՆ հրամաններով սահմանված նոր նորմերի մասին:

Պաշտոնական կայքում լուսաբանվել է Կապիկի ծաղիկ հիվանդության և Ղրիմ-Կոնգոյի տենդի՝ աշխարհում արձանագրված դեպքերով պայմանավորված Տեսչական մարմնի կողմից աշխատակազմի հետ աշխատանքային ժողով անցկացնելու, ինչպես նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի (ՄՕ) սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետում (ՄԲՀԿ) սահմանի անցման կետում Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի կասկածելի դեպքերի հայտնաբերման, վարակի տարածման կանխարգելմանն ուղղված ուսումնական վարժանք իրականացնելու մասին իրազեկման նյութ:

Հանրությանն իրազեկվել է ՀՀ Կառավարության 2020թ-ի ապրիլի 30-ի 718-Ն որոշման մեջ և ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի N 1185-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Բարձր ջերմային ֆոնով պայմանավորված «Լուրեր» լրատվականի կողմից պատրաստվել է տեսահոլովակ. «Աշխատանքը՝ բարձր ջերմաստիճանի պայմաններում»: Ռեպորտաժը տեղադրվել է նաև պաշտոնական էջում:

Հանրության աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով նյութ է հրապարակվել աշխատանքի ընդունելիս գործատուի կողմից պարտադիր աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Հրապարակվել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 21-Ն հրամանի ուժի մեջ մտնելու վերաբերյալ նյութ, որով հաստատվել են ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» ՀՀ շինարարական նորմերը:

2022 թվականին առաջին անգամ Տեսչական մարմնի տարեկան ստուգումների ծրագրում, ըստ ՀՀ կառավարության հաստատած ռիսկերի մեթոդաբանության, ընդգրկվել են հոգեբուժական բժշկական ծառայություն մատուցող հիմնարկներ, ինչով պայմանավորված Տեսչական մարմինը իրականացրել է ստուգաթերթի պիլոտային փորձարկում «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում, որը ևս լուսաբանվել է:

Հանրությանն իրազեկվել է Տեսչական մարմնի և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում Տեսչական մարմնում ներդրված «Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները Հայաստանի Հանրապետությունում» ուղեցույցի մասին:

Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը «Լուրեր» լրատվականի եթերում հանրությանը ներկայացրել է E-Hlib համակարգի ներդրման մասին. ռեպորտաժը տեղադրվել է ֆեյսբուքյան էջում:

Տեսչական մարմինը Առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացրել է իրազեկման սեմինար՝ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վարման և վերահսկողության վերաբերյալ: Սեմինարին մասնակցել են բժշկական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ֆեյսբուքյան էջով տարածվել է «Ռադիոլուր»-ի ռեպորտաժը՝ աշխատանքային իրավունքի խախտման մասով Տեսչական մարմնի կողմից հարուցված վարույթների մասին:

Լուսաբանվել է ՌԴ Սոչի քաղաքում կայացած ԱՊՀ անդամ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի համաժողովի աշխատանքը, որին հեռավար մասնակցել է տեսչական մարմնի ղեկավարը:

Հրապարակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)՝ «Միասին նպաստենք Հայաստանում աշխատանքային իրավունքների իրացմանը» նախագծի աջակցությամբ կայացած քննարկման մասին լուրը:

Հանրությանն իրազեկվել է առցանց հարթակում կայացած մի շարք միջոցառումների մասին՝ Տեսչական մարմնի մասնագետների մասնակցությամբ, ինչպես նաև «Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում Տեսչական մարմնում իրականացված սեմինարների մասին:


Գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին ընդառաջ իրազեկման նյութ է հրապարակվել թունաքիմիկատների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ:

Հիմնական նյութերը տեղադրվել են, ինչպես Տեսչական մարմնի ֆեյսբուքյան էջում, այնպես էլ պաշտոնական կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում իրականացվել է իրազեկման 292 աշխատանք, ստորև նշված ուղղություններով.


- կորոնավիրուսային վարակով պայմանավորված՝ 40,
- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 19,
- աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում՝ 67,
- բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտում՝ 26,
- դեղերի շրջանառության ոլորտում՝ 6,
- նկարահանում-հաղորդման հյուր՝ 17,
- ոլորտային իրազեկումներից զատ կատարված այլ աշխատանքներ՝ 117:

Իրազեկման աշխատանքներ՝ 292



- Դեղերի շրջանառության ոլորտում՝ 6
- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտում՝ 59, որից 40՝ կորոնավիրուսի մասին աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության
- Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 26
- Նկարահանում-հաղորդման՝ 17
- Այլ՝ 117

Իրազեկում 2020-2022թթ



	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջ. պահպանման և անվտանգ.	դեղերի շրջանառության	բժշկական և օգնության սպասարկ.	այլ
2020թ.՝ 1005	447	414	22	9	113
2021թ.՝ 508	281	70	10	15	132
2022թ.՝ 292	59	67	6	26	134

Կանխարգելիչ գործողություն



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
 ☎ (374-10) 65-05-53, Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
 Թեժ գիծ 8107

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են՝ իրազեկման աշխատանքներ, խորհրդատվության տրամադրում, ստուգայցեր՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների, ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՄԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 24-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Տեսչական մարմնի կողմից իրականացվել է ստուգայցեր թվով **17332** տնտեսավարող սուբյեկտներում (հյուրանոցներում, առողջարաններում, դեղատներում, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում), որոնց ընթացքում կատարվել են նաև խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ: Ստուգայցերի ընթացքում բացահայտված խախտումների քանակը՝ 259:

Այսպիսով, Տեսչական մարմինը իրականացրել է 24111 կանխարգելիչ միջոցառումներ (2021թ.՝ 61178, 2020թ.՝ 39471):

Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի

կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումներ

Տեսչական մարմնի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, Մեղրիի, Բավրայի, «Շիրակ» օդանավակայանի, Բագրատաշենի, Այրում-Զիլիզայի և Գոգավան-Պրիվոլնոյեի ՄԲՀԿ-ներում հերթափոխային եղանակով ապահովվել է 24-ժամյա ուժեղացված ռեժիմով աշխատանքը՝ պայմանավորված COVID-19 վարակով և իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ.

- ՄԲՀԿ-ները տեղեկատվական էլեկտրոնային կայքերի միջոցով մշտապես հետևել են այլ երկրներում համաճարակաբանական իրավիճակին և վարակների հնարավոր տարածման ուղիներին: Առավել մեծ ուշադրություն է դարձվել կորոնավիրուսի COVID-19 շտամով պայմանավորված վարակին,

- ՀՀ պետական սահմանի անցման կետում վարակիչ հիվանդությունների, կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով պարբերաբար բարձրացվել է ՄԲՀԿ-ների աշխատողների զգոնությունը, ուսուցանվել են Կապիկի ծաղիկ հիվանդության, Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդով հիվանդության ժամանակ գործողությունների ստանդարտ ընթացակարգի, կասկածելի դեպքերի հայտնաբերմանն ու կանխարգելման ուղղված աշխատանքների վերաբերյալ,

- իրագեկվել են կորոնավիրուսի «օմիկրոն» շտամի տարածվող BA4, BA5 ենթատեսակների կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերմանն ու կանխարգելման ուղղված աշխատանքների վերաբերյալ,

- ըստ ՄԲՀԿ-ների տրված տեղեկատվության, հաշվետու ժամանակահատվածում հսկողություն է իրականացվել տարբեր երկրներից ժամանած **14573** չվերթով, **340275** ավտոտրանսպորտային միջոցներով և **2208** գնացքներով ժամանած **2864553** ուղևորների և անձնակազմի նկատմամբ: Բոլոր ուղևորների, օդանավերի և գնացքների անձնակազմերի անդամների հեռահար ջերմաչափում, անհրաժեշտության դեպքում՝ կրկնակի ջերմաչափում, հարցում առողջական վիճակի վերաբերյալ, անամնեստիկ տվյալների հավաքում, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն,

- հայտնաբերված 14 ջերմող ուղևորները սահմանված կարգով հոսպիտալացվել են,

- բոլոր ուղևորների մոտ ստուգվել են կորոնավիրուսի նկատմամբ թեստերի առկայությունը: Դրանք առկա էին 159.325 ուղևորի մոտ,

- տեղում թեստավորված 74.888 ուղևորին, գնացքի և օդանավի անձնակազմի անդամներին տրամադրվել են ծանուցագրեր և ինքնամեկուսացման կանոնների վերաբերյալ տեղեկաթերթիկներ,

- թեստավորումից հրաժարված անձանց թիվը կազմել է 31,

- պատվաստման սերտեֆիկատներ առկա էին 295.558 ուղևորի մոտ,

- յուրաքանչյուր հերթափոխից հետո տվյալ հերթափոխի ընթացքում ժամանած ուղևորների մասին տեղեկությունները օպերատիվ կերպով փոխանցվել են Տեսչական

մարմնի կենտրոնական ապարատ, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին,

- ՄԲՀԿ-ն սերտ համագործակցել է «Զվարթնոց» Մ/Օ-ում գործող այլ ծառայությունների և պետական սահմանի անցման կետում հսկողություն և վերահսկողություն իրականացնող կառույցների աշխատակիցների հետ: Կախված արագ փոփոխվող հանգամանքներից, պարբերաբար փոփոխվել և համաձայնեցվել են համատեղ ընթացակարգերը, պարբերաբար տեղեկացվել են վարակիչ հիվանդությունների, հատկապես COVID-19 վարակի, կլինիկական նշանների, կասկածելի դեպքերի (հիվանդների) վաղ հայտնաբերման, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման, աշխատակիցների անհատական պաշտպանության և հայտնաբերման դեպքում պատասխան գործողությունների վերաբերյալ,

- կապված Տեսչական մարմնի ղեկավարի մայիսի 25-ի շրջաբերականի՝ աշխարհում արձանագրված կապիկի ծաղիկ հիվանդության հետ, իրազեկվել և համապատասխան խորհրդատվություն է տրամադրվել մեկնողներին և ժամանողներին, ինչպես նաև պետական սահմանի անցումային կետում հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների անձնակազմին՝ սպառնացող առողջապահական վտանգների, ներառյալ՝ կապիկի ծաղիկ հիվանդության կլինիկական նշանների և տարածման ուղիների մասին,


- մաքսատան տարածքում վերահսկողություն է իրականացվել ամենօրյա սանիտարահիգիենիկ և ախտահանման աշխատանքների իրականացման նկատմամբ,

- իրականացվել է ՄԲՀԿ-ների տարածքի ամենօրյա ախտահանման աշխատանքներ:

V. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

2022 թվականի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1014 թեմատիկ ստուգում (այդ թվում վերստուգում՝ 354), որից ավարտվել է 899 (այդ թվում վերստուգում՝ 309) ստուգում, ուժը կորցրած է ճանաչվել 31 հանձնարարագիր, չեղյալ է ճանաչել՝ 4, իսկ 80 ստուգում հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ ընթացքի մեջ է: Ստուգման արդյունքում կազմվել է 575 ակտ և 324 ստուգման տեղեկանք: Տրվել է 539 հանձնարարական (կարգադրագիր)՝ խախտումների և թերությունների վերացման մասին: Ստուգումների և վերստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների

նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է 909 որոշում տուգանք նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 761,749,547 դրամի տուգանք:



2022 թվականին իրականացվելիք ստուգումների ծրագրով նախատեսված 647 թեմատիկ ստուգումից հրապարակվել է 624 հանձնարարագիր, ինչպես նաև 10՝ նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված պահանջների պահպանման ապահովման նպատակով:

Այդ թվում ըստ վերահսկողության ենթակա ոլորտների.

2022 ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵՎԱՆ ԾՐԱԳԻՐ (այդ թվում նյութական պահուստի ստուգում)									
ՈԼՈՐՏ	2022	Ընթացք 2021	Ստուգման արդյունքներ						Կարգադրագիր
			Ընդամենը	Ակտ/ակտի նախագիծ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Զեղյակ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունք	207		207	167	19	1		20	146
Աշխատանքի անվտանգություն	136		136	114	6	5		11	111
Բուժ	54		54	49	4	1			47
Դեղ	85		85	52	21	11	1		51
Հիգիենա	90		90	75	11	3	1		73
Անվտանգություն, Իրավունք	27		27	24	1			2	22
Բուժ, Հիգիենա	23		23	18	2			3	16
Բուժ, Դեղ	1		1	1					1
Դեղ, Հիգիենա	1		1					1	
Նյութական պահուստ	10		10	9	1				9
Ընդամենը	634	0	634	509	65	21	2	37	476

2021 ՄՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼ ԵՎ ԱՎԱՐՏՎԵԼ Է 2022 ԹՎԱԿԱՆԻՆ)									
ՈԼՈՐՏ	2022	Ընթացք 2021	Մտուզման արդյունքներ						Կարգադրագիր
			Ընդամենը	Ակտ/ակտի նախագիծ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքի անվտանգություն		1	1	1					1
Բուժ		1	1	1					1
Դեղ		24	24	3	11	8	2		3
Ընդամենը	0	26	26	5	11	8	2	0	5
2022 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄՏՈՒԳՈՒՄ (ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 2022 ԹՎԱԿԱՆԻՆ)									
ՈԼՈՐՏ	2022	Ընթացք 2021	Մտուզման արդյունքներ						Կարգադրագիր
			Ընդամենը	Ակտ/ակտի նախագիծ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունք	59		59		48			11	
Աշխատանքի անվտանգություն	53		53	8	32			13	7
Բուժ	30		30	1	22			7	1
Դեղ	47		47	13	32	1		1	13
Հիգիենա	50		50	4	43			3	4
Անվտանգություն, Իրավունք	4		4		3			1	
Բուժ, Հիգիենա	6		6		4			2	
Նյութական պահուստ	1		1					1	
Ընդամենը	250	0	250	26	184	1	0	39	25
2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄՏՈՒԳՈՒՄ (ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 2022 ԹՎԱԿԱՆԻՆ)									
ՈԼՈՐՏ	2022	Ընթացք 2021	Մտուզման արդյունքներ						Կարգադրագիր
			Ընդամենը	Ակտ/ակտի նախագիծ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքի անվտանգություն	16	1	17		16			1	
Բուժ	26	1	27	8	19				8
Դեղ	12		12	4	8				4
Հիգիենա	9	2	11	5	4			2	5
Բուժ, Հիգիենա	11	3	14	10	4				9
Բուժ, Դեղ, Հիգիենա	1		1	1					1
Ընդամենը	75	7	82	28	51	0	0	3	27
2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՄՏՈՒԳՈՒՄ (ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 2022 ԹՎԱԿԱՆԻՆ)									
ՈԼՈՐՏ	2022	Ընթացք 2021	Մտուզման արդյունքներ						Կարգադրագիր
			Ընդամենը	Ակտ/ակտի նախագիծ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքի անվտանգություն	15		15	4	10			1	3
Բուժ	2	1	3	1	1	1			1
Դեղ	1		1		1				



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
 ☎ (374-10) 65-05-53, Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
 Թեժ գիծ 8107

Հիգիենա	1		1		1				
Բուժ, Հիգիենա		2	2	2					2
Ընդամենը	19	3	22	7	13	1	0	1	6
ԸՆԴԱՄԵՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ / ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ									
ՈՒՈՐՏ	2022	Ընթացք 2021	Ստուգման արդյունքներ						Կարգադրագիր
			Ընդամենը	Ակտ/ակտի նախագիծ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացք	
Աշխատանքային իրավունք	266	0	266	167	67	1	0	31	146
Աշխատանքի անվտանգություն	220	2	222	127	64	5	0	26	122
Բուժ	112	3	115	60	46	2	0	7	58
Դեղ	145	24	169	72	73	20	3	1	71
Հիգիենա	150	2	152	84	59	3	1	5	82
Անվտանգություն, Իրավունք	31	0	31	24	4	0	0	3	22
Բուժ, Հիգիենա	40	5	45	30	10	0	0	5	27
Բուժ, Դեղ, Հիգիենա	2	0	2	2	0	0	0	0	2
Դեղ, Հիգիենա	1	0	1	0	0	0	0	1	0
Նյութական պահուստ	11	0	11	9	1	0	0	1	9
Ընդամենը	978	36	1014	575	324	31	4	80	539

2022 թվականի ծրագրով նախատեսված ստուգումների թիվ – 647

Փաստացի ստուգված – 564

Ընթացք - 37

Ուժը կորցրած – 21


Չեղյալ ճանաչված – 2

Չհրապարակված - 23 (առկա են տարբեր հանգամանքներ, համաձայն որի տնտեսավարող սուբյեկտներում ստուգում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագրեր հրապարակման ենթակա չէին՝ ստուգաթերթ և նորմ՝ 17, գործունեությունը դադարեցրած՝ 5, Մարզպետարանի և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստուգման անհնարինության վերաբերյալ գրություն՝ 1):

VI. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեսչական մարմինը 2022 թվականի ընթացքում ստացել է 699 (2021թ՝ 654) դիմումներ և բողոքներ, որոնցից օրենքով սահմանված կարգով 25 վերադարձվել է, 55 վերահասցեագրվել

է, 130-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ, 485 դիմումների հիման վրա իրականացվել է վարչական վարույթներ, իսկ մնացած 4-ն ընթացքում են: Այսպես, ըստ ոլորտների.




Օրենքով սահմանված կարգով հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից հարուցվել է 2066 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 485, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 1581, որից 247-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

Աղյուսակում ներկայացված են 2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը՝ 2020-2021թթ. համեմատությամբ և ըստ Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների: Համաձայն այդ տվյալների 2022 թվականին հարուցված վարչական վարույթների թիվը 2021 թվականի համեմատությամբ աճել է 41,3%, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 126,8%:

Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը				
Հ/Հ		2020 թվական	2021 թվական	2022 թվական
1	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ	292	424	341
2	բժշկական օգնության և սպասարկման ոլորտ	187	228	225
3	դեղերի շրջանառության ոլորտ	283	277	255

4	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտ	149	533	1245
ԸՆԴԱՄԵՆԸ		911	1462	2066


Հարուցված վարչական վարույթներ (2020-2022թթ)



	Բնակչության անվտանգ. սպասարկմ.	Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջ. պահպանման	Պեղերի շրջանառության	Բժշկական օգնության և սպասարկման
2020թ.՝ 911	292	149	283	187
2021թ.՝ 1462	424	533	277	228
2022թ.՝ 2066	341	1245	255	225

Խախտումները վերացնելու համար տրվել է 421 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, 1544 վարույթ կարճվել է, այդ թվում 180՝ դիմումից հրաժարվելու հիմքով, իսկ մնացածը ընթացքի մեջ է: Վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ

կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է 888 որոշում տուգանք



նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 155,930,328 դրամի տուգանք:

VII. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐ Է ՀԱՆԵԼ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են հիմնականում տնտեսավարող սուբյեկտների օրենսդրության պահանջների չիմացությամբ:

Խախտումները ըստ ոլորտների.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն ու շեղումներն են՝

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները, այն է՝ առանց «Պատշաճ արտադրական գործունեության» հավաստագրի դեղեր արտադրելը,
- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի փաթեթավորման, պիտակավորման և մակնշման պահանջը խախտելը,

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ առանց ներմուծման հավաստագրի դեղեր ներմուծելը,

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ ՀՀ չգրանցված կամ պիտանիության ժամկետն անցած, ՀՀ օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղեր իրացնելը,

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ, 8-րդ, 9րդ և 12-րդ մասերի պահանջները, այն է՝ դեղերի առաքումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների խախտմամբ իրականացնելը, դեղատոմսով բաց թողնվող դեղերի իրացումն առանց դեղատոմսի իրականացնելը, ՀՀ օրենսդրությամբ չսահմանված ձևաթղթերի վրա դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսեր լրացնելը, դուրսգրելը և իրացնելը, դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից դեղերի մեծածախ իրացում իրականացնելը,

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի պահանջները, այն է՝ դեղի գովազդը առանց Լիազոր մարմնի թույլտվության իրականացնելը, դեղ չհամարվող ցանկացած արտադրանքի (կենսաակտիվ հավելումներ, գեղարարական միջոցներ և այլն)՝ որպես բուժման միջոցի գովազդ իրականացնելը,

- ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետի պահանջը, այն է՝ դեղատոմսով բաց թողնման ենթակա դեղերն առանց դեղատոմս իրացնելը:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն ու շեղումներն են՝

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ չլիցենզավորված բժշկական օգնության և սպասարկման տեսակներով գործունեություն իրականացնելը,

- «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը, այն է՝ բուժական մեթոդի գովազդի իրականացում, առանց ՀՀ առողջապահության նախարարի կողմից տրամադրված թույլտվության,

- ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան ավագ բուժաշխատողի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» N 1936-Ն որոշման 1-ին և 2-րդ հավելվածների պահանջները, այն է՝ իրականացվող բժշկական ծառայությունների շրջանակում բժշկական սարքավորումների և կադրային հագեցվածության ոչ լիարժեք ապահովում,

- Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այն է՝ մասնագիտական որակավորման վերաբերյալ կադրային փաստաթղթերի բացակայություն,

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի պահանջը, այն է՝ ավագ և միջին բուժաշխատողները օրենսդրությամբ սահմանված կարգով չեն լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը, այդ թվում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն ու շեղումներն են՝

- ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման, թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր,

- ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի օգոստոսի 16-ի թիվ 933-Ն հրամանով հաստատված «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (ՌՀԷՄՃ) N 2.1.8-010-06 սանիտարական կանոններ և նորմեր,
- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր,
- ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր,
- ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէագերծման մշակմանը և մանրէագերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր,
- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր, ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմեր և կանոններ:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն ու շեղումներն են՝

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չեն կնքվել աշխատանքային պայմանագրեր,
- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի կատարվել լրիվ վերջնահաշվարկ,
- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել աշխատավարձ,
- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի պահանջները, այն՝ գործատուի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվել է սահմանված ժամկետների խախտումով,

սակայն գործատուն աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին չի վճարել տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով:

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 15-ի N 1089-Ն որոշման պահանջները, այն է՝ արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատողները չեն անցել նախնական և պարբերական բժշկական զննություն,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջները, այն է՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի և կազմակերպությունում աշխատողների անվտանգության ու առողջության վիճակի գնահատման հիման վրա գործատուն չի կահավորել կոլեկտիվ պաշտպանության միջոցները, աշխատողներին չի տրամադրել անհատական պաշտպանության միջոցներ:

VIII. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 19 առաջարկություն (2021թ.՝ 14): Միաժամանակ՝ քննարկվել և կարծիք է ներկայացվել տարբեր գերատեսչությունների կողմից մշակված 24 նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ (2021թ.՝ 20):

Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ ներկայացվել են մի շարք առաջարկություններ, մասնավորապես կապված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից պիտանիության ժամկետները անցած դեղերը պահելու և կիրառելու, պետության կողմից անվճար հիմունքներով տրամադրվող դեղերի իրացումը կանխելու, դեղերի շրջանառության ոլորտում հսկիչ զնումներ իրականացնելու, վարչական տուգանքների հայտարարման վերաբերող դրույթների, վարչական վարույթների կարճման հիմքերի լրացման, վերստուգումների առանձնահատկություններ սահմանելու, անհրաժեշտ հարկային գաղտնիքի ստացման հնարավորության վերաբերյալ:

IX. ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ
ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեսչական մարմնի դեմ բերվել է 280 բողոք, որից 123 բողոք՝ Տեսչական մարմին, 157 բողոք՝ դատարան:

123 վարչական բողոքից 41-ը բավարարվել է/բեկանվել է/փոխվել է տույժի միջոցը (33.3%):

Տարվա ընթացքում կայացվել է 148 վճիռ/որոշում՝ դատական բողոքարկված գործերի վերաբերյալ, որից 107-ը՝ ի օգուտ բողոքաբերի (72.3%): 2021թ. կայացվել էր 48 վճիռ/որոշում, որից 36-ի դեպքում՝ ի օգուտ բողոքաբերի (75%):

Ներկայացված բողոքները վերաբերվել են օրենքով սահմանված վարչական վարույթի ընթացակարգային նորմերի խախտումներին, մասնավորապես՝ վարչական ակտ կայացնելիս գործում առկա ոչ բոլոր նյութերն են օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրվել, հաշվի չի առնվել իրավախախտի մեղքի բացակայությունը, վարչական ակտերը չեն եղել որոշակի և հստակ, ինչպես նաև եղել են լսված լինելու իրավունքի խախտումներ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է առանց իրավախախտողի ներկայության, առանց պատշաճ ծանուցման կամ իրավախախտման համար պատասխանատու է որոշվել ոչ ճիշտ սուբյեկտ: Առկա է եղել տուգանքի չափի հիմնավորվածության և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության վիճարկում: